ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(Հոկտեմբեր 2002)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, դրամական ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ[1]

Տնտեսական աճ: 2002 թ. հունվար-հոկտեմբերին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 12.2%: ՀՆԱ աճը պայմանավորվել է հիմնականում շինարարության (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 4.4 տոկոսային կետ), արդյունաբերության (3.3) և ծառայությունների (2.4) ցուցանիշների աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2002 թ. հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 102.3%:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ հոկտեմբերին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 0.5%-ով աճ՝ պայմանավորված հիմնականում «Ձկնամթերք», «Բանջարեղեն և կարտոֆիլ» և «Ձու» ապրանքախմբերի համապատասխանաբար 3.7%-ով, 3.2%-ով և 10.9%-ով աճով:

2001 թ. դեկտեմբերի համեմատությամբ՝ սպառողական գների ընդհանուր մակարդակի անկումը կազմել է 3.7%: Ընդ որում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի -1.58 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունները՝ 0.19 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ -2.32 տոկոսային կետը: Բնականոն սղաճի բացասական մակարդակը պայմանավորված է բնականոն սղաճի հաշվարկում ընդգրկված «Հացամթերք», «Ձկնամթերք» և «Օխախոտ» ապրանքախմբերի գների զգալի անկմամբ:

2002 թ. հունվար-հոկտեմբերին, 2001 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 101.0%, իսկ հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ՝ 99.8%:

Արտաքին հատված: 2002 թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ապրանքների արտահանումը կազմել է 409.3 մլն ԱՄՆ դոլար (ՖՕԲ գներով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 51.2%-ով: Արտահանման աճը պայմանավորվել է հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման գծով՝ շուրջ 2.2 անգամ և «Մանածագործական իրեր» ապրանքախմբի արտահանման գծով՝ շուրջ 1.3 անգամ աճով:

Ներմուծումը կազմել է 778.7 մլն ԱՄՆ դոլար (ՍԻՖ գներով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 9.2%-ով: Զգալի աճ է գրանցվել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման գծով՝ 101.5%: Իսկ որոշ ապրանքախմբերի ներմուծման ծավալները կրճատվել են (մասնավորապես «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբինը՝ 14.8%-ով):

Ընդ որում, պետք է նշել, որ առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի, արտահանումն աճել է 14.2%-ով, իսկ ներմուծումը՝ կրճատվել 2.5%-ով:

Արդյունքում, 2002 թ. հունվար-հոկտեմբերին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նվազել է 16.5%-ով և կազմել 369.5 մլն ԱՄՆ դոլար:

2002 թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 571.1 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեզրկվելով 3.2%-ով: Հոկտեմբեր ամսվա միջին փոխարժեքը կազմել է 581.5 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեզրկվելով 3.0%-ով:

Պետական բյուջե: 2002 թվականի հոկտեմբերին պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 20.1 մլրդ դրամ՝ ծրագրված 20.8 մլրդ դրամի փոխարեն, իսկ հարկային եկամուտները՝ 16.5 մլրդ դրամ՝ ծրագրված 17.0 մլրդ դրամի փոխարեն (ծրագրում ներառված չեն մարդասիրական օգնության գծով վճարները): Հոկտեմբեր ամսվա եկամուտները կազմել են եռամսյակի ծրագրված համամասնությունների 30.8%-ը, իսկ հարկերը՝ 30%-ը: Հարկային եկամուտների հավաքագրման դրական միտումները տարվա սկզբից ևեթ ուղեկցվել են ամսվա ընթացքում հավաքագրվող հարկերի ավելի վառ արտահայտված անհամաչափությամբ: Ամսվա վերջին երկու օրերին հավաքագրված հարկերը կազմել են ամսվա ցուցանիշի 48.7%-ը՝ սեպտեմբերի նույն ցուցանիշի 42.6%-ի և օգոստոսի՝ 47.3%-ի դիմաց:

Նշված ժամանակահատվածում ՀՀ պետբյուջեի ծախսերը կազմել են 20.3 մլրդ դրամ՝ ծրագրված 24.1 մլրդ դրամի փոխարեն, ինչը հիմնականում պայմանավորված էր ՀՀ գանձապետական միասնական հաշվից նախատեսված 5.1 մլրդ դրամից 1.7 մլրդ դրամ պակաս ծախսմամբ, եկամուտների ծրագրված մակարդակից 0.7 մլրդ դրամ պակաս հավաքագրմամբ ու դրամաշնորհների քերի ստացմամբ, ինչպես նաև արժեթղթերից սպասվող 0.8 մլրդ դրամ մուտքերի դիմաց փաստացի -0.6 մլրդ դրամի ֆինանսավորմամբ:

Նշված ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդը կազմել է 0.2 մլրդ դրամ՝ ծրագրված 3.2 մլրդ դրամի փոխարեն: Պակասուրդը ձևավորվել է -0.6 մլրդ դրամ՝ պետական արժեթղթերից ստացված զուտ մուտքերի, -1.6 մլրդ դրամ՝ արտաքին ֆինանսավորման, -1.0 մլրդ դրամ՝ դեպոզիտների մուտքերի և 3.4 մլրդ դրամ՝ Գանձապետական միասնական հաշվի միջոցների նվազման հաշվին:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության պարտավորություններն ամսվա ընթացքում աճել են 0.6 մլրդ դրամով և կազմել շուրջ -10.7 մլրդ դրամ (ներառյալ ՕԻԳ-երի միջոցները):

[1] *«Տնտեսական աճ» և «Արտաքին հատված» բաժինների ցուցանիշները ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալներն են:*

Դրամավարկային քաղաքականություն: Հոկտեմբերի դրամավարկային ծրագրով նախատեսվում էր փողի բազայի՝ տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանի (85.8 մլրդ դրամ) շրջակայքում կառավարման սցենար, որը հիմնականում նպատակաուղղված էր երրորդ եռամսյակում արձանագրված խոր դեֆլյացիոն երևույթների հարթմանը: Ամսվա ընթացքում առավել ընդլայնողական քաղաքականության իրականացմանը նպաստելու էին Լինսի հիմնադրամից ակնկալվող 4.3 մլրդ դրամի դրամաշնորհը և Գանձապետական միասնական հաշվում կուտակված մեծածավալ միջոցներից (11.5 մլրդ դրամ) իրականացվելիք ծախսերը: Հոկտեմբերին նախատեսվում էր նաև 2.7 մլրդ դրամին համարժեք արտաքին պարտքի սպասարկում:

Տարվա ընթացքում առաջին անգամ ամիսն ամփոփվել է տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանից փողի բազայի ավելի քան 3.0 մլրդ դրամով գերազանցմամբ, անգամ այն դեպքում, երբ Գանձապետական միասնական հաշվի մնացորդը հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8.0 մլրդ դրամ: Փողի բազան հոկտեմբերին աճել է 10.2%-ով կամ 8.2 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 88.6 մլրդ դրամ: Ընդ որում, ի տարբերություն անցած ամիսների, հոկտեմբերին այն մշտապես գերազանցել է միջակայքի վերին սահմանը: Որպես կանոն, կտրուկ նվազում է դիտվել ամսվա վերջին օրը՝ ավելի քան 4.0 մլրդ դրամ, երբ հավաքագրվել է բյուջեի հարկային եկամուտների՝ ամսվա համար ծրագրված ցուցանիշի 40%-ը:

Փողի առաջարկի աճը գերազանցել է ակնկալիքները հիմնականում արտարժութային ակտիվների շարժերի արդյունքում: Այսպես, ստացվել է Պարենային ապահովության դրամաշնորհը՝ 2.8 մլրդ դրամ, որը ծրագրով նախատեսված չէր: Շուկայից գնվել է 2.5 մլրդ դրամի արտարժույթ: Լինսի հիմնադրամից ստացված դրամաշնորհը և սպասարկված արտաքին պարտքը հիմնականում համընկել են ծրագրված ծավալներին՝ համապատասխանաբար 5.3 մլրդ և 2.5 մլրդ դրամին համարժեք արտարժույթ: Հոկտեմբերին ԿԲ ՁԱՒ-ն աճել են 8.4 մլրդ դրամով և կազմել շուրջ 103.3 մլրդ դրամ (17.0 մլրդ դրամով ավելի, քան ծրագրով նախատեսվել էր տարեվերջին):

Կենտրոնական բանկի ՁՆԱ-ի կառուցվածքային շարժերը հիմնականում չեզոքացրել են միմյանց, և ցուցանիշը նվազել է ընդամենը 200 մլն դրամով: Կառավարության զուտ պարտավորությունների գծով ևս արձանագրվել է փոքր փոփոխություն՝ 594 մլն դրամի աճ, քանի որ Գանձապետական միասնական հաշվից կատարված 3.5 մլրդ դրամի ծախսը հիմնականում չեզոքացվել է ԿԲ-ում Կառավարության ավանդային հաշվի միջոցների 2.7 մլրդ դրամով ավելացմամբ և արժեթղթերի պորտֆելից 207 մլն դրամի պարտատոմսերի մարմամբ:

Կենտրոնական բանկի զուտ այլ ակտիվները նվազել են մոտ 1.9 մլրդ դրամով, մասամբ նախորդ ամսվա վերջին օրը գնված 2.0 մլն ԱՄՆ դոլարի հաշվապահական ձևակերպման, մի մասով էլ՝ արտաքին պահուստներից եկամուտների ստացման հաշվին:

Բանկերի հետ փոխհարաբերություններում ձևավորվել է հետևյալ պատկերը. առաջին 14-օրյակի իրացվելիության միջին օրական 800 մլն դրամ ավելցուկի պարագայում, որը, ըստ Կենտրոնական բանկի հաշվարկների, երկու անգամ ցածր է իրացվելիության օպտիմալ մակարդակից, բանկերում ծագել են իրացվելիության կարճաժամկետ խնդիրներ: Դրանք լուծելու նպատակով հոկտեմբերի 9 - 14-ը բանկերը դիմել են ԿԲ՝ 2.2 մլրդ դրամ լոմբարդային վարկ վերցնելու խնդրանքով: Բանկային համակարգում իրացվելիության խնդիրները կարգավորելուն էր ուղղված նաև ԿԲ կողմից ռեպո համաձայնագրերի կնքման առաջարկը, որին ի պատասխան՝ բանկերի կողմից ներկայացվել է ավելի քան 1.1 մլրդ դրամի պահանջարկ: Ամսվա երկրորդ կեսին իրացվելիության ավելցուկի միջին օրական մակարդակն աճել է մինչև 3.5 մլրդ դրամ. այս պայմաններում բանկերը դիմել են ԿԲ-ում ավանդադրման մշտական հնարավորության գործիքին՝ 100 մլն դրամ ծավալով: Բանկերին տրամադրվել է նաև 75 մլն դրամի վարկ՝ «Վերականգնման վարկերի բանկի» (KfW) միջոցներից:

Հոկտեմբերին շարունակվել է կանխիկ դրամի նկատմամբ պահանջարկի աճի միտումը, ինչի արդյունքում փողի բազայի աճում գերակայել է կանխիկի աճը՝ 6.2 մլրդ դրամ: Ինչ վերաբերում է թղթակցային հաշվի միջոցներին, ապա, ինչպես երևում է իրացվելիության ավելցուկի՝ վերը ներկայացված վարքագծից, ամսվա առաջին կեսին, կանխիկի արագ տեմպերով աճի պարագայում, դրանք համեմատաբար դանդաղ են աճել: Երկրորդ կեսին թղթակցային հաշիվները համալրվել են կանխիկի հետադարձ հոսքի հաշվին և կազմել 17.5 մլրդ դրամ (սեպտեմբերի վերջին՝ 11.5 մլրդ դրամ): Պայմանավորված բյուջեի հարկային ծրագրի կատարման խնդրով՝ կտրուկ նվազում է դիտվել հոկտեմբերի 31-ին (մոտ 4.0 մլրդ դրամով):

Նախորդ ամսվա համեմատ հոկտեմբերին փողի ագրեգատների աճի տեմպերը որոշ չափով դանդաղել են, այնուամենայնիվ այս ամիս ևս դրանք էապես կրել են ԿԲ կողմից իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Դա հատկապես արտահայտվել է կանխիկի հանդեպ պահանջարկի զգալի աճով (5.7 մլրդ դրամով), որն էլ ամբողջությամբ պայմանավորել է փողի և դրամային զանգվածների[2] (առանց կուտակված տոկոսների) աճը, համապատասխանաբար՝ 4.7

[2] *Փողի և դրամային զանգվածների հաշվարկում ներառված չեն այն 6 բանկերի տվյալները, որտեղ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ:*

մլրդ և 5.8 մլրդ դրամ: Ավանդների կառուցվածքում համեմատաբար կայուն վարքագիծ են ցուցաբերել դրամային ավանդները, իսկ արտարժութային միջոցները նվազել են մոտ 1.1 մլրդ դրամով՝ բացառապես ցպահանջ ավանդների հաշվին:

Փողի և դրամային բազմարկիչները ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել են համապատասխանաբար 2.05 և 1.13՝ նախորդ ամսվա վերջի 2.2-ի և 1.17-ի փոխարեն:

Ֆինանսական շուկայի պարտատոմսերի հատվածում, պայմանավորված բանկային իրացվելիության ամսական տատանումներով, հոկտեմբերին դիտվել է եկամտաբերության տատանողական վարքագիծ: Այսպես, տեղաբաշխված հիմնականում 9 - 12-ամսյա պարտատոմսերի եկամտաբերությունը սեպտեմբերի 14.9%-ից հոկտեմբերի կեսին բարձրացել է 16%, իսկ այնուհետև նվազել մինչև 15.3%: Միջին ժամկետ (4 տարի) արժեկտրոնային պարտատոմսերի գծով ձևավորված բարձր եկամտաբերությունը՝ 19.55%, իրացվելիության բարձր ավելցուկի պայմաններում բացատրվում է հիմնականում գործակալ բանկերի՝ երկարաժամկետ ոչ ռացիոնալ սպասումներով, ինչով էլ պայմանավորվել է այդ թողարկման թերի տեղաբաշխումը (1.8 մլրդ դրամի փոխարեն՝ 325 մլն դրամ):

Ի տարբերություն ՊՊ շուկայի՝ վարկային և ավանդային շուկաներում շարունակվել է տոկոսադրույքների կայուն նվազման միտումը, ինչի հետևանքով դրանց միջին կշռված մեծությունն արտահայտող բանկային տոկոսի հաշվարկային դրույքը 20%-ից իջել է 18%: Դրամային շուկային ԿԲ-ի պասիվ միջամտության հիմնավորմամբ՝ հոկտեմբերին ևս ՀՀ ԿԲ խորհուրդը ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները թողել է անփոփոխ:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Ամվամում	*Հունվար-սեպտեմբեր*	*2002 թ. հունվար-սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*	*Հունվար-հոկտեմբեր*[1]	*2002 թ. հունվար-հոկտեմբերի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ (%)*[1]
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	878527.4	111.0	1075413.5	112.2
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	102.5	-	102.3	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)* [2]	684.8	110.5	838.5	111.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	240443.6	111.0	271812.4	115.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	4146.0	94.8	4583.1	96.2
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	246347.5	102.8	294919.4	103.2
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	388152.9	115.1	439777.9	114.8
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	91352.4	133.4	112228.8	142.0
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	553585.3	111.3 [2]	629847.3	111.6 [2]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	551134.3	109.7 [2]	621243.4	109.9 [2]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)*	25754	109.1 [2]	25891	109.4 [2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1418.0	-	1417.2	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	135.1	-	134.7	-
Գործազրկության մակարդակը (%)	9.5	-	9.6	-

II. Արտաքին հատված

Ամվամում	*Հունվար-սեպտեմբեր*	*2002 թ. հունվար-սեպտեմբերը 2001 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*	*Հունվար-հոկտեմբեր*[1]	*2002 թ. հունվար-հոկտեմբերը 2001 թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ (%)*[1]
Արտահանում *(ՖՕԲ. մլն ԱՄՆ դոլար)*	355.5	146.0	409.3	151.2
Ներմուծում *(ՍԻՖ. մլն ԱՄՆ դոլար)*	674.3	108.1	778.7	109.2
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	318.8	83.9	369.5	83.5

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
		նախորդ ամսվա նկատմամբ (%)		
Հունվար	102.2	102.9	101.0	101.8
Փետրվար	99.3	100.8	99.8	95.8
Մարտ	99.4	99.6	100.0	99.5
Ապրիլ	102.5	99.8	99.6	98.8
Մայիս	101.7	101.6	100.1	100.4
Հունիս	99.5	106.1	100.2	73.3
Հուլիս	95.0	98.3	100.0	80.6
Օգոստոս	97.0	99.4	100.0	75.4
Սեպտեմբեր	99.4	99.3	100.4	94.9
Հոկտեմբեր	100.5	100.1	100.0	104.7
2002 թ. հունվար-հոկտեմբերը 2001 թ. հունվար-հոկտեմբերի համեմատությամբ	101.0	103.0	104.4	102.6

IV. Սղաճ

Ժամանակաշրջան	*2000*	*2001*	*2002*	*2002*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	1.9	4.6	2.2	2.2
Փետրվար	0.1	-0.9	-0.7	1.5
Մարտ	-0.4	0.0	-0.6	0.9
Ապրիլ	-0.8	-0.1	2.5	3.4
Մայիս	-0.3	1.6	1.7	5.2
Հունիս	-0.3	-1.3	-0.5	4.6
Հուլիս	-2.0	-2.7	-5.0	-0.6
Օգոստոս	-1.3	-0.7	-3.0	-3.6
Սեպտեմբեր	0.3	-1.2	-0.6	-4.2
Հոկտեմբեր	0.0	0.1	0.5	-3.7
Նոյեմբեր	0.9	1.2		
Դեկտեմբեր	2.4	2.4		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	0.4	2.9		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	-0.8	3.1		

V. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցուցանիշներ	*Բնականոն սղաճ*		*Սեզոնային ապրանքներ*		*Պետ. կողմից կարգ. ծառ.*		*Սղաճ[3]*
	գների փոփոխությունը	ցուցանիշին նպաստող սղաճի (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ցուցանիշին նպաստող սղաճի (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ցուցանիշին նպաստող սղաճի (տոկոսային կետ)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ[2] (%)						
Հունվար	0.3	0.22	19.6	2.00	-0.1	0.00	2.2
Փետրվար	-0.4	-0.36	17.8	1.82	0.2	0.01	1.5
Մարտ	-0.7	-0.58	13.5	1.37	0.7	0.06	0.9
Ապրիլ	0.8	0.63	26.3	2.68	1.0	0.09	3.4
Մայիս	0.4	0.29	47.2	4.82	1.1	0.10	5.2
Հունիս	-0.2	-0.14	44.8	4.57	2.1	0.18	4.6
Հուլիս	-1.0	-0.81	0.6	0.07	2.1	0.18	-0.6
Օգոստոս	-2.9	-2.34	-13.8	-1.41	1.9	0.16	-3.6
Սեպտեմբեր	-3.3	-2.69	-16.3	-1.66	1.9	0.16	-4.2
Հոկտեմբեր	-2.9	-2.32	-15.5	-1.58	2.3	0.19	-3.7

[1] Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների:
[2] ՀՀ ԿԲ հաշվարկներով:
[3] Սղաճին նպաստող նշված երեք գործոնների գումարը պետք է հավասար լինի վերջին այուևակում ներկայացված սղաճի ցուցանիշին:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]


(մլն դրամ)

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2,3]
	Կենտրոնական բանկի կարճաժամկետ պարտատոմսեր	Կենտրոնական բանկի միջնաժամկետ պարտատոմսեր	Կենտր. տարեթերթերի գծով տոկոսային ռիսկի ապահովագրում	Ընդամենը	Կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	Կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ իսկ/փոխարժեքային	ՀՀ տոհմատ. կենտ-ական հիմնադրամի միջոցներ	Ընդամենը		
2001												
Դեկտեմբեր	1444	8838	-92	10190	1739	142	6	0	36	1922	8268	***8478***
2002												
Հունվար	1164	7577	-51	8690	13895	142	6	0	8	14051	-5360	***-5100***
Փետրվար	958	7381	-37	8301	7562	141	6	0	9	7720	581	***747***
Մարտ	754	6741	-26	7469	8151	128	7	0	37	8322	-854	***-710***
Ապրիլ	678	6451	-17	7112	6853	127	8	0	0.5	6988	124	***348***
Մայիս	594	5795	-9	6380	8490	127	17	0	3	8637	-2257	***-2155***
Հունիս	216	5611	-2	5825	10135	126	13	0	0.1	10274	-4450	***-4368***
Հուլիս	0	4490	0	4490	5373	145	17	0	0.0	5536	-1046	***-905***
Օգոստոս	0	3977	0	3977	9974	144	14	0	0.0	10132	-6155	***-6079***
Սեպտեմբեր	0	3929	0	3929	15061	150	13	0	0.0	15224	-11295	***-11233***
Հոկտեմբեր	0	3722	0	3722	14221	142	60	0	0.0	14423	-10701	***-10611***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:


[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1, 2]

(մլն դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[4]	Ընդամենը
2001			
Դեկտեմբեր	17063	1922	18986
2002			
Հունվար	17571	14051	31622
Փետրվար	17527	7720	25246
Մարտ	18177	8322	26499
Ապրիլ	17678	6988	24666
Մայիս	17839	8637	26477
Հունիս	17875	10274	28149
Հուլիս	17466	5536	23002
Օգոստոս	17564	10132	27696
Սեպտեմբեր	18097	15224	33321
Հոկտեմբեր	17736	14423	32158



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցապ. պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և ՕԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 01	Հ - 02	Փ - 02	Մ - 02	Ա - 02	Մ - 02	Հ – 02	Հ – 02	Օ - 02	Ս - 02	Հ - 02
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***84908***	***91157***	***84532***	***81764***	***79629***	***80753***	***84002***	***84408***	***87192***	***94867***	***103252***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-4539***	***-19316***	***-11676***	***-9406***	***-3904***	***-7952***	***-9592***	***-8032***	***-8723***	***-14439***	***-14627***
Կառավարություն	8268	-5361	581	-854	124	-2257	-4449	-1046	-6155	-11295	-10701
Կենտրոնական կառավարություն	8304	-5353	590	-817	124	-2254	-4449	-1046	-6155	-11295	-10701
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-36	-8	-9	-37	0	-3	0	0	0	0	0
Բանկեր	3855	1920	3807	6558	7298	7430	7559	7495	11666	9698	10801
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0	0	0	2363	0	1118
ավանդներ (-)	-50	-1680	-860	-800	-45	0	0	0	0	0	-100
Զուտ այլ ակտիվներ	-16662	-15875	-16064	-15110	-11326	-13125	-12702	-14481	-14234	-12842	-14727
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***79939***	***74045***	***74683***	***74836***	***75072***	***75532***	***76280***	***78197***	***80504***	***84810***	***91499***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***80369***	***71841***	***72856***	***72358***	***75725***	***72801***	***74410***	***76376***	***78469***	***80428***	***88625***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	66692	58080	60305	60785	60814	61647	61787	64430	65067	68690	74929
Պարտադիր պահուստ. (դրամով)	13489	13528	12295	11251	14674	10913	12368	11693	12954	11475	13422
Այլ հաշիվներ	188	233	256	322	237	241	255	253	448	263	274
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***6249***	***-6625***	***-2768***	***-2135***	***1124***	***3249***	***406***	***2784***	***7675***	***8385***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-14777***	***7640***	***2270***	***5502***	***-4048***	***-1640***	***1560***	***-691***	***-5716***	***-188***
Կառավարություն	-	-13629	5942	-1435	978	-2381	-2192	3403	-5109	-5140	594
Կենտրոնական կառավարություն	-	-13657	5943	-1407	941	-2378	-2195	3403	-5109	-5140	594
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-	-28	1	28	-37	3	-3	0	0	0	0
Բանկեր	-	-1935	1887	2751	740	132	129	-64	4171	-1968	1103
այդ թվում՝ ռեպո համաձայն.	-	0	0	0	0	0	0	0	2363	-2363	1118
ավանդներ (-)	-	1630	-820	-60	-755	-45	0	0	0	0	100
Զուտ այլ ակտիվներ	-	787	-189	954	3784	-1799	423	-1779	247	1392	-1885
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-5894***	***638***	***153***	***236***	***460***	***748***	***1918***	***2306***	***4306***	***6690***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	**-**	***-8528***	***1015***	***-498***	***3367***	***-2924***	***1609***	***1966***	***2093***	***1959***	***8197***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-8612	2225	480	29	833	140	2643	637	3623	6239
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	39	-1233	-1044	3423	-3761	1455	-675	1261	-1479	1947
Այլ հաշիվներ	-	45	23	66	-85	4	14	-2	195	-185	11
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***7.4***	***-7.3***	***-3.3***	***-2.6***	***1.4***	***4.0***	***0.5***	***3.3***	***8.8***	***8.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***326***	***-39.6***	***-19.4***	***-58.5***	***103.7***	***20.6***	***-16.3***	***8.6***	***65.5***	***1.3***
Կառավարություն	-	-164.8	110.8	-247.0	114.5	-1920	97.1	-76.5	488.4	83.5	-5.3
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-	0	0	0	0	0	0	0	0	0	0
Բանկեր	-	-50.2	98.3	72.3	11.3	1.8	1.7	-0.8	55.7	-16.9	11.4
Զուտ այլ ակտիվներ	-	-4.7	1.2	-5.9	25.0	15.9	-3.2	14.0	-1.7	-9.8	14.7
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-7.4***	***0.9***	***0.2***	***0.3***	***0.6***	***1.0***	***2.5***	***2.9***	***5.3***	***7.9***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	**-**	***-10.6***	***1.4***	***-0.7***	***4.7***	***-3.9***	***2.2***	***2.6***	***2.7***	***2.5***	***10.2***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-12.9	3.8	0.8	0.05	1.4	0.2	4.3	1.0	5.6	9.1
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	0.3	-9.1	-8.5	30.4	-25.6	13.3	-5.5	10.8	-11.4	17.0
Այլ հաշիվներ	-	23.9	9.9	25.8	-26.4	1.7	5.8	-0.8	77.1	-41.3	4.2

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՀ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՀ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար. 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1,2]

Ցուցանիշներ	Դ - 01	Հ - 02	Փ - 02	Մ - 02	Ա - 02	Մ - 02	Հ - 02	Հ - 02	Օ - 02	Ս - 02	Հ - 02
ՋԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-3498**	**3200**	**2876**	**2727**	**4211**	**7508**	**10677**	**13658**	**15823**	**17242**	**11981**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	55176	54053	54588	60237	57105	58750	67038	75386	68942	73013	68625
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-55274	-47308	-48187	-54227	-50039	-48825	-52994	-58914	-50259	-53135	-53274
Արտաքին պարտավորություններ դրամով	-3400	-3546	-3525	-3282	-2854	-2417	-3367	-2814	-2859	-2636	-3369
ՋՆԱ	96425	89411	87335	88124	86951	85168	85401	83780	84733	93953	98269
Կառավարություն	1129	3801	4255	3238	3678	4448	4322	5101	6161	6159	6875
Կենտրոնական կառավարություն	1186	3912	4360	3313	3772	4544	4423	5181	6238	6271	6968
Տեղական կառավարման մարմիններ	-58	-111	-105	-75	-95	-96	-102	-80	-77	-112	-93
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	10744	13285	10285	6265	8438	4966	6590	6173	2553	3586	5146
Պահուստային ակտիվներ	14717	16909	14990	13304	15822	12472	14262	13738	14323	13436	16150
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-3973	-3624	-4705	-7039	-7384	-7507	-7672	-7565	-11769	-9851	-11004
Տնտեսություն	96856	81539	83782	86554	86596	88019	88441	86903	88923	95459	95771
Ձեռնարկություններ	60984	56175	57136	58485	59590	60583	61058	59755	61623	67488	67738
Դրամով	18202	17450	17182	17390	17810	18104	17337	17687	18209	21003	21104
Արտարժույթով	42783	38725	39954	41095	41780	42479	43721	42069	43413	46485	46634
Տնտեսության այլ հատվածներ	35871	25363	26647	28069	27005	27437	27383	27148	27300	27970	28033
Դրամով	4195	3948	4513	5171	4785	5335	6064	6516	6675	7198	7111
Արտարժույթով	33076	22815	23533	24248	23573	23465	22682	21996	22008	22167	22317
Զուտ այլ ակտիվներ	-12304	-9213	-10987	-7933	-11761	-12265	-13952	-14397	-12905	-11250	-9523
Արտաքին ակտիվներ դրամով	124	125	168	102	106	66	93	94	81	80	78
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	1433	1246	791	5748	5375	1340	1412	1348	1465	1457	2231
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-477	-148	-30	-4836	-4638	-275	-76	-54	-39	-16	-80
Ստորադաս վարկեր	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Միջբանկային պահանջներ[3]	9178	6427	5738	6040	4991	3777	3356	5088	3885	4229	4436
Այլ ակտիվներ	30253	29930	30898	32527	31424	33336	30172	31281	30373	30599	30861
Միջբանկային պարտավորություններ[4]	-7274	-5017	-4041	-4425	-2447	-2692	-2857	-4840	-3370	-3726	-4076
Դրամական շուկայի գործիքներ	-90	-91	-92	-93	-94	-95	-96	-97	-98	-99	0
Ներդրումներ փայաբաժիններում	369	368	368	368	357	357	358	305	230	230	230
Ստորադաս պարտավորություններ ռեզիդենտներին	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ	-38202	-34925	-35359	-36411	-36983	-39335	-37095	-36996	-35019	-33094	-32189
Զուտ ներբանկային հաշիվներ	332	327	374	409	319	42	196	-279	77	190	174
Այլ պարտավորություններ	-7985	-7457	-9802	-7364	-10170	-8787	-9415	-10247	-10489	-11099	-11190
ԱՎԱՆԴՆԵՐ[6]	**92927**	**92611**	**90211**	**90852**	**91162**	**92675**	**96077**	**97438**	**100556**	**111195**	**110250**
Այդ թվում՝ սառեցված ավանդներ	8381	7946	7141	6392	5737	5549	5472	5285	5226	5384	5396
Դրամով ավանդներ[6]	18420	19554	20416	20082	20854	21469	22398	21877	20930	28037	28201
Ցպահանջ ավանդներ[5,6]	12073	12067	12421	12380	13286	13593	14983	14654	14103	17398	17127
Ժամկետային ավանդներ[6]	6347	7487	7995	7702	7568	7876	7415	7223	6827	10639	11074
Այդ թվում՝ սառեցված ավանդներ՝ դրամով	916	841	754	692	663	658	658	652	650	633	632
Ավանդներ արտարժույթով[6]	74506	73057	69795	70770	70308	71206	73679	75561	79626	83158	82049
Ցպահանջ ավանդներ[6]	26516	32678	30001	32488	32669	32540	35911	36970	37700	38199	37072
Ժամկետային ավանդներ[6]	47400	39830	39283	37801	37163	38196	37426	38224	41521	44542	44521
Այդ թվում՝ սառեցված ավանդներ արտարժ.	7465	7106	6386	5700	5074	4891	4815	4633	4576	4751	4764
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	590	548	510	481	475	470	342	368	404	418	456

[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] Բոլոր դասակարգումներն իրականացված են ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկի» հատվածային հաշվեկշիռների կազմման սկզբունքներին համապատասխան, յուրաքանչյուր գործիք ընդգրկում է հաշվարկված տոկոսները: Բոլոր արտարժութային հաշիվները հաշվարկված են շուկայական փոխարժեքներով:

[3] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պահանջների հանրագումարը:

[4] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պարտավորությունների հանրագումարը:

[5] Ընդգրկված են ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Ներառյալ սառեցված հաշիվները և ավանդները:

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 01	Հ - 02	Փ - 02	Մ - 02	Ա - 02	Մ - 02	Հ - 02	Հ - 02	Օ - 02	Ս - 02	Հ - 02
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***81410***	***94357***	***87408***	***84491***	***83840***	***88261***	***94679***	***98066***	***103015***	***112109***	***115233***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***76741***	***54324***	***60836***	***65545***	***66268***	***64293***	***61321***	***61964***	***61416***	***65793***	***67390***
Կառավարություն	9396	-1559	4836	2384	3801	2191	-128	4056	6	-5136	-3826
Կենտրոնական կառավարություն	9490	-1440	4950	2496	3896	2290	-26	4136	83	-5024	-3733
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-36	-8	-9	-37	0	-3	0	0	0	0	0
Տեղական կառավարման մարմիններ	-58	-111	-105	-75	-95	-96	-102	-80	-77	-112	-93
Տնտեսություն[4]	97028	81560	83801	86573	86613	88036	88457	86921	88945	95482	95796
Ֆեռնարկ. և կազմակերպ.	61132	56175	57136	58485	59590	60583	61058	59755	61623	67488	67738
որից՝ կուտակված տոկոսներ	2549	2235	2269	2359	2406	2546	2591	2464	2553	1561	1440
Տնտեսության այլ ճյուղեր	35896	25385	26666	28088	27023	27453	27399	27166	27322	27994	28058
որից՝ կուտակված տոկոսներ	859	787	769	745	610	536	470	462	484	118	207
Զուտ այլ ակտիվներ	-29683	-25677	-27801	-23412	-24146	-25934	-27008	-29013	-27535	-24553	-24580
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [5,8]	***83429***	***75362***	***78143***	***78898***	***79519***	***81046***	***82045***	***84201***	***84368***	***94460***	***100273***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***157345***	***147894***	***147454***	***149243***	***149359***	***151785***	***155384***	***159412***	***163793***	***177216***	***181868***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց սառեցված հաշ.)*	***148964***	***139947***	***140313***	***142850***	***143622***	***146236***	***149912***	***154127***	***158567***	***171832***	***176472***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [6,8]	***158151***	***148681***	***148244***	***150036***	***150108***	***152554***	***156000***	***160030***	***164431***	***177902***	***182623***
Շրջանառությունում կանխիկ դրամ	65037	55839	57778	58862	58709	59638	59668	62338	63427	66444	72099
Ցպահանջ ավանդներ[7,8]	12260	12276	12650	12647	13516	13831	15236	14890	14348	17645	17399
Այդ թվում՝ սառեցված	837	776	706	653	641	640	650	644	642	625	624
կուտակված տոկոսներ	184	195	209	220	185	184	157	148	161	165	172
ժամկետ.. խնայ. և արտարժ. ավանդ.	80855	80566	77816	78527	77883	79085	81096	82802	86657	93814	93124
Այդ թվում՝ սառեցված	7544	7171	6435	5740	5096	4909	4822	4641	4584	4759	4772
կուտակված տոկոսներ	622	592	581	573	564	585	459	470	477	521	583
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ[8]	74507	73080	69821	70826	70315	71209	73681	75579	79830	83175	82050
Ցպահանջ[8]	26518	32701	30028	32544	32676	32543	35912	36987	37904	38215	37073
Ժամկետային[8]	47400	39830	39283	37801	37163	38196	37426	38224	41521	44542	44521
Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ.	7465	7106	6387	5701	5074	4891	4814	4632	4576	4751	4764
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	590	548	510	481	475	470	342	368	404	418	456
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***12947***	***-6949***	***-2917***	***-651***	***4421***	***6418***	***3387***	***4949***	***9094***	***3124***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-22417***	***6512***	***4709***	***723***	***-1975***	***-2972***	***643***	***-548***	***4377***	***1597***
Կառավարություն	-	-10955	6395	-2452	1417	-1610	-2319	4184	-4050	-5142	1310
Կենտրոնական կառավարություն	-	-10930	6390	-2454	1400	-1606	-2316	4162	-4053	-5107	1291
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-	-28	1	28	-37	3	-3	0	0	0	0
Տեղական կառավարման մարմիններ	-	53	-6	-30	20	1	6	-22	-3	-35	19
Տնտեսություն	-	-15468	2241	2772	40	1423	421	-1536	2024	6537	314
Ֆեռնարկ. և կազմակերպ.	-	-4890	968	1351	1092	1008	480	-1303	1868	5865	250
որից՝ կուտակված տոկոսներ	-	-248	43	92	33	155	50	-127	89	-992	-121
Տնտեսության այլ ճյուղեր	-	-10578	1273	1421	-1052	415	-59	-233	156	672	64
որից՝ կուտակված տոկոսներ	-	-178	-27	-3	-122	-94	-86	-8	22	-366	89
Զուտ այլ ակտիվներ	-	4006	-2124	4389	-734	-1788	-1074	-2005	1478	2982	-27
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-8067***	***2781***	***755***	***621***	***1527***	***999***	***2156***	***167***	***10092***	***5813***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	**-**	***-9451***	***-440***	***1789***	***116***	***2426***	***3599***	***4028***	***4381***	***13423***	***4652***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց սառեցված հաշ.)*	**-**	***-9017***	***366***	***2537***	***772***	***2614***	***3676***	***4215***	***4440***	***13265***	***4640***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-9470***	***-437***	***1792***	***72***	***2446***	***3446***	***4030***	***4401***	***13471***	***4721***
Շրջանառությունում կանխիկ դրամ	-	-9198	1939	1084	-153	929	30	2670	1089	3017	5655
Ցպահանջ ավանդներ	-	16	374	-3	869	315	1405	-346	-542	3297	-246
Այդ թվում՝ սառեցված	-	-61	-70	-53	-12	-1	10	-6	-2	-17	-1
կուտակված տոկոսներ	-	11	14	11	-35	-1	-27	-9	13	4	7
ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.	-	-289	-2750	711	-644	1202	2011	1706	3855	7157	-690
Այդ թվում՝ սառեցված	-	-373	-736	-695	-644	-187	-87	-181	-57	175	13
կուտակված տոկոսներ	-	-30	-11	-8	-9	21	-126	11	7	44	62
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	-	-1427	-3259	1005	-511	894	2472	1898	4251	3345	-1125
Ցպահանջ	-	6183	-2673	2516	132	-133	3369	1075	917	311	-1142
Ժամկետային	-	-7570	-547	-1482	-638	1033	-770	798	3297	3021	-21
Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ.	-	-359	-719	-686	-627	-183	-77	-182	-56	175	13
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	-	-42	-38	-29	-6	-5	-128	26	36	14	38

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	*15.9*	*-7.4*	*-3.3*	*-0.8*	*5.3*	*7.3*	*3.6*	*5.0*	*8.8*	*2.8*
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	*-29.2*	*12.0*	*7.7*	*1.1*	*-3.0*	*-4.6*	*1.0*	*-0.9*	*7.1*	*2.4*
Կենտրոնական կառավարություն	-	115.2	443.8	-49.6	56.1	-41.2	-101.1	16008	-98.0	-6153.0	-25.7
Տնտեսություն	-	-15.9	2.7	3.3	0.0	1.6	0.5	-1.7	2.3	7.3	0.3
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-8.0	1.7	2.4	1.9	1.7	0.8	-2.1	3.1	9.5	0.4
Տնտեսության այլ ճյուղեր	-	-29.5	5.0	5.3	-3.8	1.5	-0.2	-0.9	0.6	2.5	0.2
Զուտ այլ ակտիվներ	-	-13.5	8.3	-15.8	3.1	7.4	4.1	7.4	-5.1	-10.8	0.1
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	*-9.7*	*3.7*	*1.0*	*0.8*	*1.9*	*1.2*	*2.6*	*0.2*	*12.0*	*6.2*
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	-	*-6.0*	*-0.3*	*1.2*	*0.1*	*1.6*	*2.4*	*2.6*	*2.7*	*8.2*	*2.6*
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց սառեցված հաշ.)*	-	*-6.1*	*0.3*	*1.8*	*0.5*	*1.8*	*2.5*	*2.8*	*2.9*	*8.4*	*2.7*
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	*-6.0*	*-0.3*	*1.2*	*0.0*	*1.6*	*2.3*	*2.6*	*2.8*	*8.2*	*2.7*
Շրջանառությունում կանխիկ դրամ	-	-14.1	3.5	1.9	-0.3	1.6	0.1	4.5	1.7	4.8	8.5
Ցպահանջ ավանդներ	-	0.1	3.0	0.0	6.9	2.3	10.2	-2.3	-3.6	23.0	-1.4
Այդ թվում՝ սառեցված	-	6.0	7.2	5.3	-15.9	-0.5	-14.7	-5.7	8.8	2.5	4.2
Ժամկետ.. խնայ. և արտարժ. ավանդներ	-	-0.4	-3.4	0.9	-0.8	1.5	2.5	2.1	4.7	8.3	-0.7
Այդ թվում՝ սառեցված	-	-4.8	-1.9	-1.4	-1.6	3.7	-21.5	2.4	1.5	9.2	11.9
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	-	-1.9	-4.5	1.4	-0.7	1.3	3.5	2.6	5.6	4.2	-1.4
Ցպահանջ	-	23.3	-8.2	8.4	0.4	-0.4	10.4	3.0	2.5	0.8	-3.0
Ժամկետային	-	-16.0	-1.4	-3.8	-1.7	2.8	-2.0	2.1	8.6	7.3	0.0
Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ.	-	-4.8	-10.1	-10.7	-11.0	-3.6	-1.6	-3.8	-1.2	3.8	0.3

[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով. առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքով:

[3] Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[4] 2002 թ. հունվարից ԿԲ «Ներդրումներ ռեզիդենտ իրավաբանական անձանց կապիտալում» հաշիվը տնտեսության պահանջներից վերադասակարգված է այլ ակտիվներում, որի պատճառով տնտեսության նկատմամբ պահանջների՝ հունվարից ապրիլ ամիսների ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:

[5] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[6] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[7] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

[8] Ներառյալ սառեցված հաշիվները և ավանդները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1[3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2[4]	Արտարժույթով ավանդներ	M2X[5]
2001							
Դեկտեմբեր	65037	12076	77113	6316	83429	73917	157346
2002							
Հունվար	55839	12081	67920	7442	75362	72532	147894
Փետրվար	57778	12441	70219	7924	78143	69311	147454
Մարտ	58862	12427	71289	7609	78898	70345	149243
Ապրիլ	58709	13331	72040	7479	79519	69840	149359
Մայիս	59638	13647	73285	7761	81046	70739	151785
Հունիս	59668	15079	74747	7298	82045	73339	155384
Հուլիս	62338	14742	77080	7121	84201	75211	159412
Օգոստոս	63427	14187	77614	6754	84368	79425	163793
Սեպտեմբեր	66444	17480	83924	10535	94459	82757	177216
Հոկտեմբեր	72099	17227	89326	10947	100273	81595	181868

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՍԱՌԵՑՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ [1,2]

(մլն դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1[3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2[4]	Արտարժույթով ավանդներ	M2X[5]
2001							
Դեկտեմբեր	65037	11239	76276	6237	82513	66452	148965
2002							
Հունվար	55839	11305	67144	7377	74521	65426	139947
Փետրվար	57778	11735	69513	7876	77389	62924	140313
Մարտ	58862	11774	70636	7570	78206	64644	142850

Ապրիլ	58709	12690	71399	7457	78856	64766	143622
Մայիս	59638	13007	72645	7743	80388	65848	146236
Հունիս	59668	14429	74097	7290	81387	68525	149912
Հուլիս	62338	14098	76436	7112	83548	70579	154127
Օգոստոս	63427	13545	76972	6746	83718	74849	158567
Սեպտեմբեր	66444	16855	83299	10528	93827	78006	171833
Հոկտեմբեր	72099	16603	88702	10939	99641	76831	176472


[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[4] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[5] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):




Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
100
80
60
40
20
0
Հ97 Ա Հ Հ Հ98 Ա Հ Հ Հ99 Ա Հ Հ Հ00 Ա Հ Հ Հ01 Ա Հ Հ Հ02 Ա Հ Հ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
80
60
40
20
0
Հ97 Ա Հ Հ Հ98 Ա Հ Հ Հ99 Ա Հ Հ Հ00 Ա Հ Հ Հ01 Ա Հ Հ Հ02 Ա Հ Հ



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
20
15
10
5
0
-5
-10
-15
Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ
99 00 01 02
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
12
10
8
6
4
2
0
-2
-4
-6
-8
Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ
99 00 01 02
Փողի զանգված
Սղաճ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2001	2002									
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ
Կենտրոնական բանկի ՁԱԱ	84908	91157	84532	81764	79629	80753	84002	84408	87192	94867	103252
Առևտրային բանկերի ՁԱԱ	-3498	3200	2876	2727	4211	7508	10677	13658	15823	17242	11981
Ընդամենը	81410	94357	87408	84491	83840	88261	94679	98066	103015	112109	112109
Կենտրոնական բանկի ՁԱԱ [3]	***85782***	***91853***	***85194***	***82422***	***80199***	***81221***	***84615***	***84870***	***87701***	***95364***	***103723***



[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] ՁԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ՁԱԱ-ն փաստացի փոխարժեքով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ դրամ	M1	M2	M2X
2001					
Դեկտեմբեր	72931	55645	69656	76244	149534
2002					
Հունվար	73620	56194	68229	76090	148504
Փետրվար	77033	61846	75715	83398	153689
Մարտ	76008	62403	76690	83810	153518
Ապրիլ	79522	62527	76636	83747	156406
Մայիս	75093	63171	77112	84412	158544
Հունիս	77862	62661	78216	85209	160447
Հուլիս	74991	61332	75114	82285	157086
Օգոստոս	76513	62024	73828	80831	157467
Սեպտեմբեր	77099	63762	78789	89733	171985
Հոկտեմբեր	86522	70710	87526	98592	180728


[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:


Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:

Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2001[4]	2002									
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	329.6	337.2	324.0	319.9	317.2	322.5	330.3	328.5	335.5	350.5	389.1
Համախառն միջազգային պահուստներ	333.2	340.8	327.6	323.6	319.8	325.2	333.6	331.9	335.8	350.8	389.5
Ոսկի[2]	12.4	12.6	13.2	13.5	13.8	14.6	14.3	13.7	13.9	14.4	14.2
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	8.4	6.1	6.1	4.1	4.0	1.9	0.1	9.6	9.2	32.3
Արտարժույթ[3]	310.6	319.8	308.3	304.0	302.0	306.6	317.3	318.1	312.3	327.3	343.0
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*[5]	***331.2***	***338.6***	***325.3***	***321.3***	***318.6***	***323.8***	***331.5***	***329.7***	***336.7***	***351.6***	***390.6***


[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] ՀՀ ԿԲ ոչ ռեզիդենտ բանկերի թղթակցային հաշիվներում առկա ոսկու մնացորդը վերադասակարգված է և հանված է «Արտարժույթ»-ից ներառվելով «Ոսկու» մեջ, որի պատճառով սույն հրատարակման «Ոսկի» և «Արտարժույթ» տողերի մնացորդները տարբերվում են նախորդ թողարկումների համապատասխան ցուցանիշներից:

[3] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստների ցուցանիշները տարբերվում են 2001 թ. դեկտեմբեր, 2002 թ. հունվար և փետրվար ամիսների ՀՀ ԿԲ տեղեկագիր պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:

[5] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ[1]

Ցուցանիշներ	2001[4]	2002									
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ
Վարկեր [2]											
Իրավաբանական անձանց											
ՀՀ դրամով	27.5	23.4	20.0	24.3	19.9	19.3	24.1	27.0	27.7	12.5	17.6
ԱՄՆ դոլարով	20.3	28.6	20.7	17.3	15.6	21.9	20.5	20.4	23.0	20.1	17.1
Ֆիզիկական անձանց											
ՀՀ դրամով	30.2	29.8	29.3	28.0	28.4	28.1	27.5	27.7	26.6	28.7	28.0
ԱՄՆ դոլարով	35.5	37.1	34.0	37.1	36.3	36.5	37.3	36.4	36.5	35.7	27.7
Ավանդներ [2]											
Իրավաբանական անձանցից											
ՀՀ դրամով	15.0	10.0	12.0	13.0	9.6	11.0	12.0	8.8	6.5	12.1	8.0
ԱՄՆ դոլարով	9.7	4.0	14.0	6.7	10.1	9.0	6.9	6.6	6.3	6.0	7.7
Ֆիզիկական անձանցից											
ՀՀ դրամով	14.6	11.9	9.8	10.2	11.8	11.8	11.8	12.0	12.2	11.8	12.3
ԱՄՆ դոլարով	10.8	9.3	7.1	9.3	8.5	10.9	7.5	8.5	8.6	6.8	7.6
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	14.0	13.5	13.5	13.5	13.5	13.5	13.5	13.5	13.5	13.5
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	8.0	6.0	6.0	6.0	6.0	6.0	6.0	6.0	6.0	6.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	30.0	30.0	28.0	28.0	28.0	28.0	28.0	28.0	28.0	28.0	28.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [3]	16.4	14.3	13.8	13.0	14.1	14.3	15.0	15.6	15.7	14.9	15.5
Սղաճ	2.9	2.2	-0.7	-0.6	2.5	1.7	-0.5	-5.0	-3.0	-0.6	0.5

[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[2] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[3] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[4] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ-01	Հ-02	Փ-02	Մ-02	Ա-02	Մ-02	Հ-02	Հ-02	Օ-02	Ս-02	Հ-02
1	-	-	563.99	568.18	576.96	-	-	575.35	561.16	-	574.40
2	-	-	-	-	577.26	579.34	-	573.79	560.55	556.49	579.06
3	566.51	561.81	-	-	577.56	579.34	582.22	572.14	-	555.92	579.83
4	566.51	561.81	563.84	568.18	577.56	-	582.22	569.39	-	556.23	579.06
5	566.51	-	563.18	567.71	577.88	-	582.38	-	560.37	555.98	-
